ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

11 նոյեմբերի 2024թ. թիվ 1269

## Ա.ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ ԵՎ Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԾԱՂԿԱՁՈՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի ղեկավարի հրավերը և գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ  եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետներ Արտակ Դեմիրչյանին և Սամվել Խառատյանին 2024թ. նոյեմբերի 12-ից 14-ը ներառյալ՝ երեք օրով գործուղել Ծաղկաձոր՝ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի շրջանակում իրականացվող Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության բնագավառներում համայնքների կարողությունների զարգացման ծրագրային դասընթացներին մասնակցելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել ճանապարհածախսը: Օրապահիկը և գիշերավարձը կփոխհատուցի հրավիրող կողմը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

11/11/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր